



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում Քաղաքացիական գործ ԸԻԴ N 1001/02/14
Քաղաքացիական գործ ԸԻԴ N 1001/02/14
Նախագահող դատավոր՝ Լ.Ավանեսյան
Դատավորներ՝ Հ.Աբրահամյան
Ն.Գրիգորյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք. Ստեփանակերտ 22-ին հունիսի 2015թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)
վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Վ. Հովսեփյանի
դատավորներ՝ Ի. Կարապետյանի
Գ.Արզումանյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի «Կրոմվել Գրիգորյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ նաև ՍՊԸ/ ընդդեմ Ազատ Վլադիմիրի Ավագիմյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին և ըստ Ազատ Վլադիմիրի Ավագիմյանի հակընդդեմ հայցի՝ պայմանագրի՝ գնին առնչվող դրույթներն անվավեր ճանաչելու պահանջի մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015 թվականի փետրվարի 12-ի որոշման դեմ հայցվոր «Կրոմվել Գրիգորյան» ՍՊԸ-ի տնօրեն Կ.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1.Գործի դատավարական նախապատմությունը

«Կրոմվել Գրիգորյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը /այսուհետ՝ նաև Հայցվոր/ 2013թ. դեկտեմբերի 23-ին դիմելով ՀՀ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրել է Ազատ Վլադիմիրի Ավագիմյանից /այսուհետ՝ նաև Պատասխանող/ բռնագանձել 900 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և 15.07.2013թ.-ից մինչև գումարի փաստացի մարման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները:

«Կրոմվել Գրիգորյան» ՍՊԸ-ն 13.01.2014թ.-ին ներկայացրել է հայցագնի չափն ավելացնելու մասին հայցադիմումի լրացում, խնդրելով Ազատ Վլադիմիրի Ավագիմյանից բռնագանձել 3000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և 15.07.2013թ.-ից մինչև գումարի փաստացի մարման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները:

Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 2014թ. ապրիլի 30-ին որոշում է կայացրել քաղաքացիական գործն ըստ ընդդատության՝ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, ուղարկելու մասին:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը /այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան/ 2014 թվականի մայիսի 22-ին որոշում է կայացրել քաղաքացիական գործը վարույթ ընդունելու և նախնական դատական նիստ հրավիրելու մասին:

Պատասխանող Ա.Ավագիմյանը 2014թ. հուլիսի 24-ին հակընդդեմ հայց է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ «Կրոմվել Գրիգորյան» ՍՊԸ-ի և իր միջև 15.06.2013թ. թվագրությամբ կազմված «Ծառայությունների մատուցման պայմանագրի» գնին առնչվող 2.2.2-րդ, 2.3.1-րդ, 3.1-րդ, 3.1.1-րդ կետերում ներառված դրույթները, որոնք վերաբերվում են յուրաքանչյուր ամիս պատվիրատուի կողմից կատարողին 1.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ վճարելուն՝ անվավեր ճանաչելու պահանջով:

Առաջին ատյանի դատարանի 2014թ. հոկտեմբերի 27-ի վճռով /դատավոր Ռ.Ջհանգիրյան/ սկզբնական հայցը բավարարվել է մասնակի. վճռվել է Ազատ Վլադիմիրի Ավագիմյանից հոգուտ «Կրոմվել Գրիգորյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գանձել 533 /հինգ հարյուր երեսուներեք/ ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Վճռվել է նաև Ազատ Վլադիմիրի Ավագիմյանից հոգուտ «Կրոմվել Գրիգորյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2013թ. սեպտեմբերի 15-ից մինչև պարտավորության դադարման օրը գանձել 533 /հինգ հարյուր երեսուներեք/ ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկվող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված տոկոսները: Մնացած մասով հայցը մերժվել է: Ա.Ավագիմյանի հակընդդեմ հայցը նույնպես մերժվել է:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/, սկզբնական և հակընդդեմ հայցվորների վերաքննիչ բողոքների հիման վրա վերանայելով Առաջին աստիճանի դատարանի վճիռը, 2015թ. փետրվարի 12-ի որոշմամբ «Կրոմվել Գրիգորյան» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքը մերժել է, իսկ պատասխանող/ հակընդդեմ հայցվոր Ա.Ավագիմյանի վերաքննիչ բողոքը բավարարել մասնակի. մասնակիորեն բեկանել և փոփոխել է Առաջին աստիճանի դատարանի վճիռը և «Կրոմվել Գրիգորյան» ՍՊԸ-ի հայցը մերժել, վճիռը՝ մնացած մասով, թողել է օրինական ուժի մեջ:

Նշված որոշման դեմ 2015թ. մարտի 17-ին /Գերագույն դատարան բողոքը մուտք է գործել 31.03.2015թ./ հայցվոր «Կրոմվել Գրիգորյան» ՍՊԸ-ի տնօրեն Կ. Գրիգորյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Գերագույն դատարանի 2015թ. ապրիլի 8-ի որոշմամբ վերադարձվել է:

Հայցվոր «Կրոմվել Գրիգորյան» ՍՊԸ-ն 2015թ. մայիսի 6-ին փոստային ծառայության միջոցով կրկին բերել է վճռաբեկ բողոք /Գերագույն դատարան բողոքը մուտք է գործել 12.05.2015թ./:

Հակընդդեմ հայցի մասով վճռաբեկ բողոք չի բերվել:

Գերագույն դատարանի 2015թ. հունիսի 4-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել պատասխանող Ա.Ավագիմյանը:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

1.Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ, 45-րդ հոդվածների 1-ին մասերի, 47-րդ հոդվածի, 49-րդ հոդվածի 1-ին մասի և 123-րդ հոդվածի պահանջները, ինչը հանգեցրել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի, 777-րդ հոդվածի 1-ին մասի, 779-րդ հոդվածի 1-ին մասի սխալ կիրառման:

2.Վերաքննիչ դատարանը պատշաճ ձևով իրեն չի տեղեկացրել գործի քննության ժամանակի մասին և գործը քննել է իր բացակայությամբ:

Նշված պնդումները բողոք բերած անձը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Պատասխանողի հետ 15.06.2012թ. /գործի նյութերով՝ 2013թ./ կնքված <<Ծառայությունների մատուցման պայմանագրի>> հիման վրա Հայցվորը պարտավորվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվող թիվ 91000213 քրեական գործով նախաքննության ընթացքում ներկայացնել մեղադրյալ Ա.Ավագիմյանի շահերը, իսկ Ա.Ավագիմյանը պարտավորվել է իրեն մատուցված ծառայությունների դիմաց վճարել 1000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ հոնորար՝ յուրաքանչյուր հերթական ամսվա 15-ին: Սկսած 15.06.2013թ. մինչև 18.10.2013թ. Հայցվորն իրականացրել է Պատասխանողի պաշտպանությունը, սակայն Պատասխանողը սկսած 15.07.2013 թվականից մինչև 2.10.2013 թվականը չի կատարել պայմանագրով նախատեսված իր պարտավորությունը: Պատասխանողի պարտքը կազմում է 2600 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Մեջբերելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի, 345-րդ, 777-րդ, 779-րդ հոդվածների 1-ին մասերի և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ, 45-րդ, 49-րդ հոդվածների 1-ին մասերի, 47-րդ հոդվածի, 230-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի բովանդակությունը, բողոք բերած անձը եզրակացրել է, որ դատարանների կողմից գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն չի կատարվել:

Ըստ բողոքի՝ անհիմն է Վերաքննիչ դատարանի որոշման հետևությունն այն մասին, որ պայմանագիրը կողմերի միջև իրականում ստորագրվել է 4.09.2013թ., քանի որ որոշման մեջ որևէ հղում չկա պայմանագիրը 4.09.2013թ. ստորագրված լինելու փաստը հաստատող ապացույցին, որի հետազոտմամբ առաջին ատյանի դատարանը կամ վերաքննիչ դատարանը կարող էին համապատասխան եզրակացության հանգել: Առաջին ատյանի դատարանն անհիմն հետևություն է արել այն մասին, որ Պատասխանողի ցուցմունքով և 11.06.2014թ. գրության պատասխանով հաստատված է համարում, որ պայմանագիրը ստորագրվել է 4.09.2013թ.: Դրանով դատարանն անտեսել է պատշաճ գրավոր ապացույց հանդիսացող պայմանագիրը, որով հաստատվում է դրա ստորագրման ժամանակը:

11.06.2014թ. գրության պատասխանը վերաբերելի ապացույց չէ: Այդ գրությամբ հաստատվում է միայն, որ Կրումվել Գրիգորյանը ՔԿՀ /քրեակատարողական հիմնարկ/ է այցելել 4.09.2013թ.: Ստացվում է, որ պաշտպանը պաշտպանյալին ՔԿՀ-ում տեսակցության է այցելել բացառապես պայմանագիր կնքելու համար, կամ պայմանագիրը հնարավոր չէ կնքել այլ վայրում, քան ՔԿՀ-ում: Պաշտպանի կողմից ՔԿՀ այցելելու օրը հաստատող ապացույցը չի կարող վերաբերելի ապացույց հանդիսանալ պայմանագիրը ստորագրելու օրը որոշելու համար: Մինչդեռ, փաստաբաններ Կ.Գրիգորյանը և Վ.Բաբայանը, որպես արդեն իսկ քրեական գործով ներգրավված պաշտպաններ, 13.06.2013թ., 14.06.2013թ., 15.06.2013թ. և դրանց հաջորդած օրերին մասնակցել են Ա. Ավագիմյանի մասնակցությամբ կատարված բոլոր քննչական և դատավարական գործողություններին:

Բողոք բերած անձի կարծիքով՝ անհիմն է դատական ակտի հետևությունն այն մասին, որ նախաքննությունն ավարտվում է մեղադրական եզրակացություն, բժշկական բնույթի միջոցների կիրառման համար քրեական գործը դատարան ուղարկելու մասին կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կազմելով, որովհետև, նախ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին կետը նման նորմ չի սահմանել, երկրորդ՝ նախաքննության ավարտ հայտարարելուց, իսկ այնուհետև մեղադրական եզրակացությամբ քրեական գործը դատախազին ուղարկելով նախաքննությունը դեռևս չի ավարտվում:

Դատական նիստի մասին պատշաճ չձանուցելու վերաբերյալ պնդումը բողոքաբերը հիմնավորել է նրանով, որ Հայցվորը 22.01.2015թ. նշանակված Վերաքննիչ դատարանի դատական նիստի մասին ծանուցումը ստացել է 26.01.2015թ., իսկ 29.01.2015թ. դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցում չի ստացել:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու անհրաժեշտությունը բողոք բերած անձը հիմնավորել է դատարանի կողմից թույլ տրված՝ իր համար ծանր հետևանքներ առաջացրած առերևույթ դատական սխալի առկայությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 12.02.2015թ. որոշումը և փոփոխել այն՝ «Կրումվել Գրիգորյան» ՄՊԸ-ի հայցը բավարարել 2600 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի

չափով: Պատասխանողից հայցվորի օգտին բռնագանձել նաև 2600 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումարի նկատմամբ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված բանկային տոկոսներն սկսած 15.07.2013թ. մինչև գումարի փաստացի վճարման օրը, կամ ամբողջությամբ բեկանել դատարանի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության, սահմանելով նոր քննության ծավալը:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքի դեմ պատասխանող /հակընդդեմ հայցվոր/ Ա.Ավագիմյանը բերել է պատասխան, որում անհամաձայնություն հայտնելով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու վերաբերյալ, ըստ էության պնդելով ստորադաս դատարաններում ներկայացրած իր փաստարկները, նշել է, որ գործով բավականին ապացույցներ են ներկայացվել, ըստ որոնց բացառվում է իր կողմից սկզբնական հայցվորի հանդեպ որևէ պարտավորություն ունենալը, խնդրել է մերժել վճռաբեկ բողոքը՝ ստորադաս դատարանի ըստ էության ճիշտ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը. գործում բացակայում է որևէ ապացույց Վերաքննիչ դատարանի 29.01.2015թ. դատական նիստի ժամանակի և վայրի մասին Հայցվորին պատշաճ տեղեկացնելու մասին:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման և Վերաքննիչ դատարանի որոշումը՝ «Կրումվել Գրիգորյան» ՍՊԸ-ի հայցի մասով, ենթակա է բեկանման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն գործող օրենսդրության՝ դատական ակտերի փոփոխման կամ բեկանման հիմքեր են գործի քննության ընթացքում թույլ տված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումները, որոնք ազդել են կամ կարող են ազդել գործի ելքի վրա:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկ բողոք բերելու հիմքերն են՝ 1/ դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, 2/ նոր կամ նոր երևան եկած հանգամանքները:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Գերագույն դատարանը պետք է պատասխանի այն հարցին, թե արդյոք Վերաքննիչ դատարանի կողմից գործի քննության ընթացքում թույլ են տրվել իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ, որոնք սահմանափակել են բողոք բերած անձի իրավունքները և հիմք են հանդիսանում Վերաքննիչ դատարանի որոշման բեկանման համար:

ԼՂՀ դատական օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ դատարաններն արդարադատությունն իրականացնում են Սահմանադրությանը, միջազգային իրավունքի նորմերին և օրենքներին համապատասխան:

ԼՂՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք: ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասը

սահմանում է յուրաքանչյուրի՝ հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքը:

ԼՂՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ոչ ոք չի կարող զրկվել հավասարության պայմաններում և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ իրավասու, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքից:

Սույն վճռաբեկ բողոքում բարձրացվում է ապացուցման պարտականությունը և ապացուցման առարկան, ապացույցները ներկայացնելու կարգը, ապացույցների թույլատրելիությունը և վերաբերելիությունը, ապացույցների գնահատումը, ինչպես նաև գործի քննության ժամանակի և վայրի մասին տեղեկացված լինելու իրավունքը սահմանող ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ, 45-րդ, 47-րդ, 49-րդ հոդվածների պահանջների խախտման հարցը, որի արդյունքում, ըստ բողոքի, խախտվել են նաև նյութական իրավունքի նորմերի /ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի, 777-րդ հոդվածի 1-ին մասի, 779-րդ հոդվածի 1-ին մասի, 411-րդ հոդվածի/ պահանջները:

Վճռաբեկ բողոքը Գերագույն դատարանի վարույթ ընդունելը պայմանավորված է Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված առերևույթ դատական սխալի առկայությամբ /ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ/, որը դատական ակտի բեկանման անվերապահ հիմք է հանդիսանում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը» վերտառությամբ 241-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման: Նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի տեղեկացվել նիստի ժամանակի և վայրի մասին: Այսինքն՝ նշված հոդվածը չի սահմանում վճռի բեկանման հիմք հանդիսացող դատավարական իրավունքի նորմերի խախտման բոլոր դեպքերը, սակայն սպառիչ թվարկում է այն դեպքերը /վճռի բեկանման անվերապահ հիմքերը/, որոնց առկայությունը հիմք է հանդիսանում վճռի պարտադիր բեկանման համար: Վերը նշվածը դրա օրինակն է հանդիսանում:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դատական գործերը քննելիս պետք է երաշխավորված լինեն կողմերի իրավունքները, ապահովվի դատական մրցակցության և հավասարության սկզբունքները: Կողմերի հավասարության սկզբունքը նշանակում է, որ կողմերին պետք է հնարավորություն տրվի ծանոթանալու հակառակ կողմի ներկայացրած փաստարկներին և ապացույցներին և դրանց վերաբերյալ հայտնելու իրենց նկատառումները: Գործին մասնակցող անձանց՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցումը կողմերի դատական պաշտպանության իրավունքի իրավահավասարության և մրցակցության սկզբունքների ապահովման կարևոր պայման է: Հետևաբար, Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում առաջին հերթին անդրադառնալ գործի քննության ժամանակի մասին չծանուցելու

վերաբերյալ վճռաբեկ բողոքի փաստարկին և պարզել, թե արդյոք խախտվել են Հայցվորի իրավունքները:

Ինչպես հետևում է գործի նյութերից, ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2014թ. դեկտեմբերի 3-ի որոշմամբ «Կրոմվել Գրիգորյան» ՍՊԸ-ի տնօրեն Կ.Գրիգորյանի վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ, և գործի քննությունը նշանակվել 2014թ. դեկտեմբերի 23-ին: Կ.Գրիգորյանի միջնորդությամբ դատական նիստը հետաձգվել է և նշանակվել 2015թ. հունվարի 16-ին, նշված օրը նիստը ևս տեղի չի ունեցել՝ դատական նիստի ժամանակի մասին Կ.Գրիգորյանի պատշաճ ծանուցումը հավաստող ապացույցի բացակայության պատճառով, և դատական նիստը հետաձգվել է և նշանակվել 2015թ. հունվարի 22-ին ժամը 16-ին: Հունվարի 21-ին պարզվել է /հեռախոսագանգի միջոցով/, որ Կ.Գրիգորյանը դատական ծանուցագիրը չի ստացել և ի վիճակի չէ ներկայանալ դատական նիստին, ուստի խնդրել է դատական նիստը հետաձգել և նշանակել մեկ այլ օր: Դատարանը հետաձգել է գործի քննությունը և նշանակել այն հունվարի 29-ին ժամը 15-ին, սակայն չի հաջողվել դրա մասին պատշաճ ծանուցել Կ.Գրիգորյանին /հեռախոսագանգերին չպատասխանելու, հեռագիրը չստանալու պատճառով/, այնուամենայնիվ նշված օրը գործը քննվել և 2015թ. փետրվարի 12-ին որոշում է կայացվել /հատոր 2, գ.թ.31-52/:

Գերագույն դատարանը իր՝ նախկինում կայացրած որոշումներում բազմիցս անդրադարձել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի պահանջների կիրառման հարցին: Գերագույն դատարանը նշել է, որ տվյալ իրավական նորմը ենթադրում է գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը:

Դատական նիստի մասին պատշաճ ծանուցման հասկացության բովանդակությունը տրվել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածում, որի համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատական ծանուցագրերով տեղեկացվում են դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին:...Ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով /այսուհետ՝ պատշաճ ձևով/:

«Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ԼՂՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առաքման փաթեթը համարվում է պատշաճ առաքված, եթե ուղարկողի մոտ առկա է առաքման անդորրագիրը և փոստային կապի ազգային օպերատորի տված տեղեկանքը՝ առաքման փաթեթը հանձնված լինելու մասին:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը, 2015թ. հունվարի 25-ի դատական նիստի վայրի և ժամանակի մասին Հայցվորին ծանուցագիրն չուղարկելով, /այլ ձևով պատշաճ չձանուցելով/, զրկել է վերջինիս գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու հնարավորությունից /մանավանդ որ առաջին ատյանի դատարանի դատական նիստերին նա նույնպես չի մասնակցել/, ինչի հետևանքով խախտվել է նրա՝ ԼՂՀ Մահմանադրության 45-րդ հոդվածով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության հիմնարար իրավունքը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Այն դեպքերում, երբ նախատեսված են բողոքարկման ընթացակարգեր, բարձր պայմանավորվող կողմերը պարտավոր են ապահովել իրենց իրավասության տակ գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից 6-րդ հոդվածով սահմանված այն նույն երաշխիքներից օգտվելը վերաքննիչ դատարաններում, ինչպիսիք նրանք ունեն առաջին ատյանի դատարանում /Բրուալլա Գոմեզ դե լա Տորրեն ընդդեմ Իսպանիայի գործով, գանգատ թիվ 26737/95, 1997 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռ.../»: Արտահայտված է նաև այն միտքը, որ իշխանությունների կողմից մեկին չծանուցելը այնպես, որ նրան հնարավորություն ընձեռվի իրականացնելու իր ներկայանալու իրավունքը, որոշ դեպքերում կարող է 6-րդ հոդվածի 1-ին մասի կապակցությամբ խնդիրներ առաջացնել:

Ամփոփելով վերոգրյալը՝ Գերագույն դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքի նշված հիմքը բավարար է Վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշումը բեկանելու համար:

Հիմնավոր է նաև վճռաբեկ բողոքի փաստարկը՝ Վերաքննիչ դատարանի կողմից ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի պահանջների խախտման մասին: Նշված իրավական նորմը սահմանում է, որ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը,... և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ այս կամ այլ հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը, ինչը բխում է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասից, համաձայն որի՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանի խնդիրն է պարզել, թե ինչ ապացույցների հետազոտմամբ է հնարավոր հաստատել կողմերի պահանջների և առարկությունների հիմքում ընկած իրավաբանական փաստերի առկայությունը կամ բացակայությունը: Այդ հարցերը լուծելիս դատարանը ղեկավարվում է ապացույցների վերաբերելիությունը, թույլատրելիությունը և ապացույցների բավարարությունը սահմանող կանոններով:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, հիմնավոր համարելով Առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված այն փաստը, որ պայմանագիրը երկկողմանի ստորագրվել է 4.09.2013թ. /ինչը վիճարկվում էր Հայցվորի վերաքննիչ բողոքում/, իր որոշման պատճառաբանական մասում չի պատճառաբանել նման եզրակացությունը և հղում չի կատարել Առաջին ատյանի դատարանի հետազոտած համապատասխան ապացույցներին: Հետևաբար, Գերագույն դատարանն անհրաժեշտ չի համարում քննության առնել բողոքում բարձրացված նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ բողոքի մյուս փաստարկները, դրանց հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման մեջ արձանագրված դատավարական իրավունքի խախտումները վերացնելուց հետո:

Վերը նշված պատճառաբանություններից ելնելով՝ Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի բողոքարկված որոշումը՝ «Կրոմվել Գրիգորյան» ՍՊԸ-ի հայցի մասով, պետք է բեկանել և գործն ուղարկել ԼՂՀ վերաքննիչ դատարան՝ նոր քննության, քանի որ Հայցվորի դատավարական իրավունքները խախտվել են այդ ստյանում: Գերագույն դատարանի նման լիազորությունը բխում է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից, համաձայն որի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանը ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի և «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի պահանջներին համապատասխան գործի նոր քննության ընթացքում պետք է անդրադառնալ դատական ծախսերի բաշխման հարցին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվոր «Կրոմվել Գրիգորյան» ՍՊԸ-ի տնօրեն Կրոմվել Գրիգորյանի վճռաբեկ բողոքը բավարարել. ԸԻԴ N 1001/02/14թ. քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015 թվականի փետրվարի 12-ի որոշումը՝ «Կրոմվել Գրիգորյան» ՍՊԸ-ի հայցի մասով, բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

**Վ. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Գ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ**